

Երեխա-հարսնացուի բանտային օրագիրը

Զարբիբին 16 տարեկան էր և 4-ամսական հղի, երբ սպանեց սեփական ամուսնուն՝ խոհանոցային դանակով փորձելով գլխատել նրան: Սպանության օրը, մերսում կատարելու պատրվակով, նա ամուսնու ոտքերը և ձեռքերը կապեց մահճակալին, ինչից հետո էլ կատարեց սպանությունը: Իր հիշողություններում Զարբիբին գրում է. «Հաջորդ առավոտյան, թեկուզ և ես ոստիկանական բաժանմունքում էի, ես երջանիկ էի, որ նա այլևս չկա: Առաջին անգամ իրենից ազատված լինելով՝ ես ինձ այնքան թեթև էի զգում՝ կարծես թռչելու պատրաստ մի օդապարիկ»:

<https://www.guernicamag.com/prison-journal-of-a-child-bride/>